«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 1
04.09.2025թ.

1. Գիտական խորհրդի 2025-2026 ուստարվա աշխատանքային պլանի քննարկման և հաստատման վերաբերյալ

Հաստատել ՀԱԱՀ Գիտական խորհրդի 2025-2026 ուստարվա աշխատանքային պլանը:

2. ՀԱԱՀ ուսումնական ստորաբաժանումների 2024-2025 ուստարվա տարեկան հաշվետվությունների հաստատման վերաբերյալ

2.1. Ընդունել ի գիտություն:

2.2. ՀԱԱՀ գիտական խորհուրդը միաձայն որոշեց հաստատել ՀԱԱՀ ուսումնական ստորաբաժանումների 2024-2025 ուստարվա տարեկան հաշվետվությունները.

-
- Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետ,
- Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետ,
- Ագրոնոմիական ֆակուլտետ,
- Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետ,
- Ագրոբիզնեսի դեպարտամենտ,
- Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետ,
- ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղ,
- ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղ,
- ՀԱԱՀ Շիրակի ակադեմ. Մ.Գ. Թումանյանի անվան գյուղատնտեսական քոլեջ,
- Ա.Ե. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջ,
- Հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարան:

2.3. Հանձնարարել ուսումնական ստորաբաժանումների ղեկավարներին սեղմ ժամկետում ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին ներկայացնել 2024-2025 ուստարվա ընթացքում ուսումնական ստորաբաժանումներում ծագած խնդիրները և դրանց հնարավոր լուծումները:

2.4. Հանձնարարել ուսումնական գործընթացի համակարգման վարչության պետ Ա. Աղասարյանին սեղմ ժամկետում վերլուծել աշխատանքային կիսամյակի սկզբունքով արտադրական պրակտիկայի գործընկեր այն կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքները, որոնք ուսանողներին գնահատել են 86-ից բարձր միավոր և ներկայացնել կարծիք նման գործընկերների հետ համագործակցությունը շարունակելու նպատակահարմարության վերաբերյալ:

2.5. Հանձնարարել ուսումնական ստորաբաժանումների ղեկավարներին սեղմ ժամկետում ուսումնասիրել իրենց ստորաբաժանումներում նոր ներդրված կրթական ծրագրերում դասավանդողների ներուժը ՀԱԱՀ-ում և, Միջազգային կապերի դեպարտամենտի պետ Գ. Համբարձումյանի հետ համագործակցելով, ՀԱԱՀ գիտական խորհրդի հաջորդ նիստի ընթացքում ներկայացնել Erasmus+ միջազգային շարժունության ծրագրի միջոցով վերապատրաստումների կազմակերպման հնարավորությունները:

2.6. Հանձնարարել Հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանի տնօրեն Ա. Հակոբյանին և ՈՒԳԿՎ պետ Ա. Աղասարյանին ճշտել վարժարանից ագրարային համալսարան ընդունված 2025-2026 ուստարվա ուսանողների տվյալները և ներկայացնել ՀԱԱՀ գիտական խորհրդի հաջորդ նիստի ընթացքում:

3. ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ներկայացված գիտական նախագծերի հայտերը երաշխավորելու վերաբերյալ

ՀԱԱՀ գիտական խորհուրդը միաձայն որոշեց հաստատել ՀԱԱՀ ասպիրանտների կողմից ներկայացված հայտերը և երաշխավորել ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2025» խորագրով մրցույթին մասնակցելու համար.

3.1. Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի առկա ուսուցման ասպիրանտ Գուրգեն Աշոտի Կարապետյանի կողմից ներկայացված «Նոր ռադիոպրոտեկտիվ պրոբիոտիկների գենից-ֆունկցիա առանձնահատկությունների գնահատումը» վերնագրով հայտը (գիտական ղեկավար՝ կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աստղիկ Զավենի Փեփոյան):

3.2. Ագրոնոմիական ֆակուլտետի առկա ուսուցման ասպիրանտ Աննա Արտակի Պետրոսյանի կողմից ներկայացված «Արժեքավոր որոշ հատապտղային բույսերի *in vitro* բուսակների արմատակալեցում և *ex vitro* ադապտացում» վերնագրով հայտը (գիտական ղեկավար՝ գյուղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Անդրեաս Շմավոնի Մելիքյան):

4. ՀԱԱՀ Մեթոդական խորհրդի 02.09.2025թ. արտահերթ նիստի հավանությանն արժանացած կրթական ծրագրերի ուսումնական պլաններում առաջարկվող փոփոխությունների, ինչպես նաև կրթական մեկ ծրագրի ուսումնական պլանի հաստատման վերաբերյալ

Հաստատել ՀԱԱՀ Մեթոդական խորհրդի հավանության արժանացած կրթական երկու ծրագրերի ուսումնական պլաններում առաջարկվող փոփոխությունները և կրթական ծրագրի ուսումնական պլանը.

4.1. ՀԱԱՀ առկա ուսուցման բակալավրիատի «Ագրոբիզնես» մասնագիտության «Ագրոբիզնես և սննդի արդյունաբերության կառավարում» կրթական ծրագրի ուսումնական պլանում կատարել հետևյալ փոփոխությունները.

➢ Աշխատանքային կիսամյակը սկսել 7-րդ կիսամյակի դեկտեմբերից (4 շաբաթ) և շարունակել 8-րդ կիսամյակում (4 շաբաթ),

➢ 8-րդ կիսամյակի առարկաները նույն ծանրաբեռնվածությամբ տեղափոխել 7-րդ կիսամյակ,

➢ «Գյուղատնտեսական էկոնոմիկա» առարկան ներառել 5-րդ կիսամյակի հիմնական առարկաների ցանկում,

➢ 5-րդ կիսամյակում «Տեխնիկական գրավոր խոսք» առարկան հիմնական առարկաներից տեղափոխել կամընտրային առարկաների ցանկ և առարկայի շարունակությունը վերանվանել «Տեխնիկական գրագիտություն»,

➢ Կամընտրային առարկաների ցանկում ավելացնել «Հետազոտական մեթոդներ» առարկան:

4.2. Ա.Ե. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի «Ագրոնոմիա» կրթական ծրագրի ուսումնական պլանում կատարել հետևյալ փոփոխությունները.

➢ «Բույսերի վնասատուները և դրանց դեմ պայքարի միջոցառումների իրականացում» մոդուլը տեղափոխել 5-րդ կիսամյակ, իսկ «Մշակաբույսերի արտադրության աշխատանքների իրականացում պաշտպանված գրունտի պայմաններում» մոդուլը՝ 6-րդ կիսամյակ՝ առանց ժամային փոփոխության:

➢ 6-րդ կիսամյակում մոդուլային դասացուցակը կազմել այնպես, որ նախ ուսումնասիրվի մուտքային մյուս պահանջը հանդիսացող «Բույսերի հիվանդությունները և դրանց դեմ պայքարի միջոցառումների իրականացում» մոդուլը, այնուհետև՝ «Մշակաբույսերի արտադրության աշխատանքների իրականացում պաշտպանված գրունտի պայմաններում» մոդուլը:

4.3. Հաստատել ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղի «Գյուղատնտեսագիտություն» միջին մասնագիտական կրթական ծրագրի ուսումնական պլանը:

5. ՀԱԱՀ Հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանի տնօրենի ընտրության նոր կանոնակարգը հաստատելու վերաբերյալ

Հաստատել ՀԱԱՀ Հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանի տնօրենի ընտրության կանոնակարգը:

6. ՀԱԱՀ 2025-2026 ուստարվա ուսման վարձավճարների հաստատման վերաբերյալ

Հաստատել ՀԱԱՀ 2025-2026 ուստարվա վճարովի ուսուցման համակարգում բակալավրիատի, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսումնառողների ուսման վարձավճարի չափերն ըստ կրթական ծրագրերի և/կամ մասնագիտությունների:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.Ս. ՋԱՔՈՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ